

ՆՈՐԱՀԱՅՏ ՆԱԽԱԿՆԵՐ ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆԻ ՖՈՆԴԻՅ

Նոտրի հրապարակվող նամակները, որոնք պահվում են Եղիշ Զարենցի անվան գրական-նուբյան և արվեստի թանգարանում, բացառությամբ առաջինի, որ վերցված է Մկրտիչ Հմինի ֆոնդից (ընագիրը ֆրանսերեն, Մկրտիչ Հմինի ֆոնդ, № 964), քաղված են Գրիգոր Խալաթյանի ֆոնդից (Գրիգոր Խալաթյանի ֆոնդ, բաժին V, №№ 550, 520, 519, 612, 97բ)։ Նամակների հեղինակներն են ֆրանսիացի հայագետ-թարգմանիչ էվերստ Պրուդոմը, բանահավաք Ալեքսանդր Մխիթարյանը, հայագետներ Գաբրիել Մենեռյանը, Գրիգոր Խալաթյանը և Մինաս Զերազը։

Կիտական շրջանառության մեջ գրվող այս նամակները, հայագիտական որոշակի արժեք ու տարաբնույթ հետաքրքրություն ներկայացնելուց զատ, բացահայտում են նամակագիրների և հասցեատերերի կյանքի ու գիտական գործունեության հետ կապված այլևայլ մանրամասներ։ Նամակները հրապարակվում են անշտան կրճատումներով։

ՎԱՐԱՋՊԱՏ ՎԱՐԻԱՅԱՆ

№ 1

էվերստ Պրուդոմը Մկրտիչ Հմինին

1864 թ., հուլիսի 30,
Փարիզ

Պարոն

Ամբողջությամբ կիսում եմ Ձեր կասկածները *klag* բառի վերաբերյալ՝ Zénob-ի մականունը և ընդունում եմ, որ սխալ եմ թույլ տվել ու կշտապեմ առաջին իսկ առիթով այն ուղղել։ Խոստովանում եմ, որ ես չէի կարող այն գուշակել մինչև Ձեր նամակը ընթերցելը։ Սակայն ես կնախընտրեի այնտեղ տեսնել ավելի շուտ ասորերեն բառ, քան թե մի հայերեն արմատ։

Արդարև, պր. Լանգլուայի¹ միջոցով իմացա Ասողիկի պատմության վերաբերյալ Ձեր թարգմանության հրատարակության², հայ բազմաստվածության վերաբերյալ Ձեր դիսերտացիայի³ և Վարդանի Տիեզերական պատմության Ձեր թարգմանության մասին⁴։ Մեծագույն հետաքրքրությամբ արդեն կարդացել էի Մովսես Խորենացու Ձեր գիտական թարգմանությունը⁵ և համոզված եմ, որ անպայման կփորձեմ կարդալ այս վերջինները։ Վարդանի Ձեր թարգմանությունը պարունակում է նույնպես, ինչպես ինձ ասացին, Jean Blouz-ի⁶ շարժման գրությունը, որ ինքս մտադրություն ունեի հրատարակել ֆրանսերեն, մյուս կողմից երկու տարի է, ինչ ձեռքիս տակ ունեմ Ասողիկի գրքի թարգմանությունը խավաքարտի վրա, որ նախօրոք ծրագրել էի հրատարակել անշատանջատ և որ պահում եմ մի անորոշ ժամանակի համար։ Այս տարբեր պատճառներով, ես կարողացա միայն երախտագիտությամբ ընդունել Ձեր բարյացակամ առաջարկությունը, որ Դուք ցանկանում եք ինձ անել, և անհամբերությամբ սպասում եմ Ձեր թարգմանություններին ու Ձեր դիսերտացիային։

Քանի որ ցանկանում եք ունենալ մի քանի տեղեկություններ հայոց պատմության վերաբերյալ իմ աշխատությունների մասին, ապա կաշխատեմ Ձեզ հաղորդել, որ այս բուպեիս պատրաստում եմ Ղազար Փարպեցու թարգմանությունը: Լավ գիտեմ, որ գործը զուրկ չէ դժվարություններից և ես վստահ եմ իմ ուժերի վրա և միևնույն ժամանակ չեմ վհատվում վերջացնել այն, առանց շատ մեղավոր լինելու: Այն բնագիրը, որ օգտագործում եմ, Վենետիկինն է, միակ հրատարակությունը: Կիմանայիք, արդյոք, պարոն, թե որտե՞ղ կարելի է գտնել մի ավելի ամբողջական ձեռագիր և ավելի անսխալ, քան այն, որի հիման վրա է արված Մխիթարյան հրատարակությունը: Նման մի գյուտ, որ դրվի իմ տրամադրության տակ, մեծ օգնություն կլինի ինձ համար: Մտադիր եմ Ղազար Փարպեցու Պատմության առջևում դնել նրա թուղթը առ Վահան [Մամիկոնեանց], որը հրատարակել եք Դուք 1853 թ. և օգտվել այդ անշափ հետաքրքրական ուսումնասիրությունից, որով Դուք կանխել եք բոլորին: Հանդիմանություն չէ, արդյո՞ք, պարոն, Ձեզ խնդրել՝ ավելացնել Ձեր առաքելիք գրքերին նաև «Ճռաքաղի»-ի երկու կամ երեք համար, որոնք պարունակեն ներսես Լամբրոնացու թուղթը, որտեղ հեղինակը խոսում է Սուրբ Սահակի տեսիլքի վավերականության մասին:

Բացի այս աշխատանքից, որ համարում եմ գլխավորը, հանգիստ առնելու անվան տակ գրեթե պատրաստել եմ Օլիմպիանոսի առակների⁹ մի հրատարակություն ըստ մի ձեռագրի, որն ավելի հին է, քան Մխիթարյանների հրատարակածը և Վարդանի Լուծմունքի մի համառոտագրված թարգմանություն: Թույլ տվեք մի պահ կանգ առնել այս փոքրիկ գրքուկի վրա: Վարդանի այդ աշխատությունը, կարծում եմ, շատ հազվագյուտ է: Այն պարունակում է շատ և շատ հետաքրքրական ունայնարանություններ՝ տիեզերակազմության, երաժշտության և հայոց գրերի ստեղծման վերաբերյալ: Ես այդտեղից դուրս եմ գրել ևս անմենը, որ ինձ թվում է արժանի է ուսյալ ընթերցողի ուշադրությանը: Ձգիտեմ, արդյոք սխալվում եմ, բայց կարծում եմ, որ եթե հայոց գրերի գյուտի վերաբերյալ ունենայիք մի հավելյալ կտոր, ապա այն փոխակերպած կլինի որոշ տեսակետներ, որ օգտագործել եք Ձեր դիսերտացիայի ծանոթագրության մեջ, նույն նյութի վերաբերյալ, Մովսես Խորենացու Ձեր թարգմանությունում: Ահա այն հատվածը, որը, հուսով եմ, Ձեզ համար հետաքրքրական կլինի մինչ այն տպագրելս:

Ո՞ր են գրերն զոր պարզեհաց Ած. Պատ. Այս են. զ գիր ձայնաւոր և ժգ գիր անձայն: Եւ ձայնաւորք են ա, ե, ո, թ, ռ, լ: Եւ անձայնքն են այս. ք, գ, ժ, ծ, ձ, շ, ջ, վ, ց, զ, ց, յ, փ, ընդամէնն ժք: Եւ այս են ճշմարտապէս ստուգիւ գտեալ: Զի ասորիք ընդ մեր թագաւորօքն էին: Եւ նոցայն իբ գիրն է: Ի նոցանէ ջանացան առնել մեզ գիր: Եւ լեալ էր հայերէն նշանագիր ի հին ժամանակսն սակաւ. և զի չկտրէին բանել նոքօք՝ թողին և մոռացաւ. և երբ դժ ի խնդիր ելին, գտաւ առ Դանիէլ անուն՝ ասորի եպսի: Եւ Սահակ և Մեսրոբ առաքեցին զԱբէլ անուն՝ երէց ասորի և եբեր: Եւ զի շբերեր լիով ղհարստուի լեզուիս. զնաց դժ Մեսրոբ առ նոյն եպսն: Եւ սակաւ ինչ աշխատ եղեն, և չկարացին աւելի շահիլ. զի առաջինն ի նց է էր առած ժէ գիր. զի զն գիրն թողեալ էր և շէր թարգմանեալ: Երբ ջանային թէ՛ թարգմանենք ըստ մեր լեզուիս, չգայր ի բան այն հինգ գիրն:

Ապա յաղօթս ապաւինել, տեսանէր մարգարէական աշօք թաթ ձեռին աջոյ՝ որ գրէր ի վր վիմի. և ամ հանգամանքն և որպիսիք տպաւորեցաւ ի

սիրտու, Եւ վզվզկի ստեղծանէր ժք գիրու, Եւ այն որ է ասեն, վո Եց պատուակա-
նութ ասեն. որ ձայնաւորք են, և որպէս հոգի են այլոցն: Եւ ընդէ՞ր ասեն է զի
զ է ձայնաւորն: Զի է գիրն կայր յԱսորոցն և նա զայն էառ ի Դանիելէ Մեսրոբ:
Վս որոյ զայն այլ նմա ասեն: Բայց ի մարդոյ օգտեցաւ զմէկն զէ գիրն, և զժյ-
յայ, Եւ վս է գրոյն առաւել պիտաութի՝ զէ մէն ասեն և գովեն. և ժք շիշեն. այլ
զայս հաստատ տես: Եւ թէ ասեն թէ՛ ալփայն այլոցդ կայ. է՞ր շառնութն
ասեմք թէ՛ յԱսորոցն աւ է որ է ո. և այբն այս է. ա շկայ և այլք զի ունին, բայց
այլ կերպիւ մերն յայ ձեացաւ օրինակն: Այս առանց կարծեաց է՞¹⁰,

Հնդունք հարգանքներիս հավաստիքը, մնամ նվիրված ծառա Զերդ

Պրուդհոմ

78 Avenue de Breteuil

№ 2

Ալեքսանդր Միլիթարյանը Գրիգոր Խալաթյանին

1886 թ., փետրվարի 10,

Ալեքսանդրապոլ

Մեծապատիւ բարեկամ

պ. Գրիգոր Խալաթյանց

Մի քանի տարուց հետե սկսել էի ժողովել մեր Շիրակ գավառի ժողովըր-
դական սովորութիւնները, նախապաշարմունքները, երգերն ու պարերգերը
(նաե գութանի հոռովները), ազգային առածները, հանելուկները, անեծքները,
օրհնութիւնները, երգումները, հայհոյանքները, երազների բացատրութիւննե-
րը, կախարդութիւնները, ծածկամիտ (խորհրդավոր) նախադասութիւնները,
աղավաղյալ բառերը, մանկական խաղերը, երգերի, պարերգերի և մանկական
խաղերի անվանական ցանկերը և, վերջապես, մի քանի առակներ և միայն
երկու հատ հեքիաթ¹ (որովհետե կամենում եմ հեքիաթները, վեպերը և վեպիկ-
ները առանձին ժողովածու կազմել): Բացի սրանցից՝ մանրամասնաբար նկա-
րագրած եմ երկրագործութիւնը յուր բոլոր ամբողջությամբ, ուր հիշված են
երկրագործական գործիքների, կենդանյաց, թռչնոց, ձկանց, բուսոց, ծաղկանց,
կերակրոց և անոթեղենաց անունները: Նույնպես շեմ մոռացել մանրամասնա-
բար նկարագրելու գութանի ձիթհանքի, ջրաղացի և այլ մասերը: Գրել եմ
նմանապես մի քանի գավառական բարբառներ, որոնց հետ կցել եմ մի քանի
հատ, արդեն տպագրված բարբառներից, որպեսզի գավառական բարբառների
մի ամբողջ ժողովածու կարողանամ տալ ընթերցող հասարակությանը: Այո
բարբառների մեջ ամենահետաքրքիր տեղն է բռնում մաղագործների (բոշանե-
րի) բարբառը յուր նորությամբ և օտարաձե բառերով (թեև բառերի մեծամաս-
նութիւնը հայկական վերջավորությամբ են կազմված): Հատկապես այս բար-
բառի բառերից (մոտ 300 հատ) առանձին բառարան եմ կազմել, որպեսզի
Զեդ նման մասնագետները կարողանան մի որոշ գաղափար կազմել այս կի-
սահայ, թե ինքնաստեղծ (ճշմարիտ չգիտեմ ինչ անուն տամ) և տակավին եր-
բեք լույս չտեսած բարբառի մասին: Նույնպես առանձին բառարան եմ կազմել

գրվածքիս մեջ եղած և բացառապես շեղած ժողովրդական բառերի: Ձեզ ձանձրույթ չպատճառելու համար մնացած մանրամասնությունքը զանցառության եմ տալիս:

Վերոհիշյալ ժողովածուն յուր ճակատին կրում է «Փշրանքներ Շիրակա ամբարներից»² վերնագիրը և մաքուր արտագրած բաղկանում է համարյա 50—60 թաքաղա հասարակ-սպիտակ թղթից (մոտավորապես 250 երես):

Գրվածքիս մի փոքրիկ նմուշը կամ պատկերը կարող եք տեսնել անցյալ տարվա «Նոր Դարի»-ի № 3—4 «Նկարագիր գյուղական հարսնանյալ» և № 20? «Հայոց սովորություններից» վերնագրով հոդ:

Այսքան տեղեկություն տալուց հետո՝ հույսս մեծ լինելով դեպի Ձեզ, ազնիվ պարոն, հայտնապես խոստովանում եմ, որ միջոց չունենալով հիշյալ ժողովածուն տպագրել տալու, ուստի դիմում եմ Ձեզ, որ շնորհ անեք Ձեր հաշվով տպագրել տալ, որպեսզի տարիների ընթացքում հազար ու մեկ դժվարությունամբ ձեռք բերած այդ ժողովրդական մասունքները այս և այն անկյուններում չկորչեն... Իսկ տպագրության պայմանների որոշումը թողնում եմ Ձեզ: Միայն այսքան կասեմ, որ այդտեղ Ձեր բարեկամներից ում որ կուզեք հանձնեցեք, թող գրվածքը կարդա և ըստ այնմ տեղեկություն տա Ձեզ: Իսկ եթե այդ բանը ավելորդ համարելով միայն գրածներիս հավատ ընծայեք և ուղղակի հանձն կառնեք Ձեր հատուկ հսկողությամբ այդտեղ տպագրել տալու՝ ես ամենայն ուրախությամբ կուղարկեմ Ձեզ:

Ավելորդ չեմ համարում հիշել, որ իմ ժողովածուն, սակավ և աննշան բացառությամբ, կազմված է տակավին չտպագրված նյութերից, ընդ որում հայր Սրվանձտյանի և մի քանի այլոց գրվածքների հետ ըստ հնարավորության արդեն համեմատել եմ: Մանավանդ որ իմ ժողովածուն այլ ձևով է կազմված— բոլոր նյութերը ըստ տեսակին և հարմարության, միմյանցից որոշված են և առանձին գլուխների բաժանված:

Խնդրում եմ, համեմայնդեպս, Ձեր որոշման մասին բարեհաճեք ինձ շուտով տեղեկություն տալ, որպեսզի միամիտ լինեմ և ինչ-որ անելու եմ՝ անեմ:

(Եթե չեք մոռացել, սրանից 4—5 տարի առաջ այստեղ եղած ժամանակդ, երբ մի երեկո Ձեր տանը պատմությունիցդ, որը արդեն տպագրված է՝ մի քանի երես արտագրած ժամանակս, իմ այս ժողովածուի մասին համառոտակի տեղեկություն տված եմ Ձեզ):

Ահա իմ հասցեն. Александрополь, Александру Мхитаряну.

Մնամ Ձեզ միշտ հարգող

Ալեքսանդր Մխիթարյանց

№ 3

Գարբիել Մենեիշյանը Գրիգոր Խալաթյանին

[18]83 թ., հուլիսի [?],
Վիեննա

Ազնվամեծար Տեր.

Շատ շատ ուրախացա՝ առ Վհ. Գրիգորիս Վ.¹ գրված նամակին մեջ «Հյուբշմանի» մասին Ձեր կողմանե եղած դիտողութեանց. ամենայն սիրով կփութամ Ձեր առաջարկությունն ընդունելով փոխադարձաբար քանի մի դիտողություններ ընել, որով կհուսամ թե այսու Ձեր և իմ մեջս թղթակցության զոդ մը կկապվի:

Հնդհանուր առադարձության խնդրին գալով, անշուշտ, կարդացած պիտի ըլլաք «Արեւելքի» մեջ հառաջ բերած պատճառներս, որոնցմով կարծեմ ոչ իզուր, չանացի խնդրին լեզվագիտական կողմանե նկատել ու հիմնվելով անվանի լեզվագիտաց (պրոֆ. Միլլեր, Հուիթնեյ, Դելբրյուկ³, Հյուբշման⁴...) փայտեցնի նկատմամբ ըսածներուն վրա:

Քննենք խնդրին ի մերձուսի: Այս խնդրույն վրա խոսողներ երեք կետ իրարու կիսառնակեն, որով պատճառ կըլլա այս մութ շփոթության այնպիսի խընդրո մը մեջ, որ կրնամ ըսել չէ այնչափ շփոթ: Այսինքն. խնդիր կհուզվի արեւմտյան արտասանության վրա. երկրորդ՝ արեւմտյան տառադարձության վրա և երրորդ՝ երկուքին ևս պատճառացը վրա:

Ա. Արտասանության (Aussprache) նկատմամբ զարմանալի է (ներեցեք մեծ. տեր, որ հայտնի և պարզ խոսեմ) ռուսահայոց աղաղակն, որ ամեն առթիվ կգողին թե Պոլսո հայք սխալ կարտաբերեն, և խոստորած են Մեսրոպյան արտասանությունն: Այսպիսյաց՝ աչքը կուրցնող ապացույցն ու վկայությունն անգամ անօգուտ է, ինչպես կտեսնենք, վասն զի կարծեն թե ստուգիվ հայերեն լեզուն ծնած, զարգացած և մեռած է միայն Մեծին Մեսրոպա բերանը... Կարեւոր է սակայն, որեւէ լեզվի մեջ, բովանդակ գավառականներուն մեջ միմիայն նույնություն տեսնել. միայն Գերմանիայի հյուսիսային բարբառներն առնունք և իրարու հետ՝ և հետո Ավստրիայի jargon-ի հետ համեմատենք... Կրնա՞մք մեկը նույնություն գտնել այս մասին...:

Անցնինք ավելի կարեւորագույն խնդրույն—տառադարձության. der ist ja neben der Witz! Այնպես կենթադրվի ի վերոհիշյալ գրողաց, թե մինչև 1840—50 որոշ կանոններով հասած ըլլա առ մեզ առանց բացառության որոշ տառադարձություն մը, և հանկարծ 1850-ին ասդին սկսած ըլլա այժմյան՝ արեւմտյան խառնաշփոթությունը: Բայց այս տառադարձության խառն վիճակը շատ շատ ճիւղ է. առնունք ձեռք ցնիսդարյան գրվածոց մեծագույն մասը, մանավանդ բժշկարաններն, տաղարաններն և այլն, կգտնենք որոշ տառադարձություն. ի՞նչ կերպարանք կառնուն 11 դարեն ասդին եվրոպական անվանց և բառերու մեծախումբ բազմությունը: Պիտի ըսենք տգիտություն էր. այո կխոստովանեի, եթե չունենար այս տարածությունն. կրնա՞նք նաև առանց նշանակության թողուլ նույնիսկ հնագույն փոխառյալ (կամ ոչ) բառերու մեջ գրերու անմիօրինակությունն. ինչո՞ւ պաշտատական և ոչ պաշտադական, երբ բուն բառն է՝ պարսկ. پادشاه (pašdad նույնպես պակապան, պաշտպան, պրս. pastban, pašeban պայազառ, պրսկ. پاد, նույնպես պատինճան prs. badingan, ամպարշտել—ան-բարշտել. ամբարշտվան—ամպարհավա, և ընդհանրապես նաև ռեգական գրելեն հոքը լեւկ (tenuis) գրելու փոփոխություն. պարսկերենի և նաև արաբերենի մեծագույն բառերուն դիմացը կգտնենք հակառակ տառադարձություն, որ լավ մտադրության կետ մըն է:

Բայց ասով չկարծեք, որ ընդհանուրին միօրինակյալ տառադարձություն չեմ ընդունիր, քով լիցի. միայն կուզեմ ըսել, թե պետք չէ կանոններն առանց բացառության ենթադրել: Թե ռուսահայք միօրինակյալ տառադարձություն ունին հիմա. այո ճիշտ ունին. բայց թե ասկե 30—40 տարի յառաջ ալ ունեին, կտարակուսիմ. վասն զի կտեսնեմ թե պրոֆ. էմինին ևս զղղ. (գաղղիերեն—Վ. Վ.) Բյուզանդն⁵ հակառակ վկայություն կուտա. անդ կթարգմանվի Պապ = Bab, Անդովկ—Antok և այլն:

Հիմա ալ շատ բառերու մեջ իրարու հակառակ տառադարձութիւն ունին ռուսահայք. որոնց առձեռն պատրաստ պաշար մը չունիմ այժմ:

Paris Փարիս, Փարիզ, Պարիս

Leipzig Լայպցիգ, Լայպցիդ,

Լեյպցիգ, Լեյպցիխ.

Տփլիս—Տփքդիս, թիֆլիզ և այլն:

Իսկ 3 կետը առաջնոյն մեջ կրովանդակվի: Գալով մեր. «Հանդեսին»⁶, տառադարձութեան խնդիրը պարզ է: Թե մենք մեսրոպեան տառադարձութեան առաջին պաշտպաններն հանդիսացած ենք զբարբառի մեջ, կարծեմ չեք ուրանար. բայց նույնիսկ զբարբառի մեջ սկսանք ժամանակ մի նույն տառադարձութեան հետեիլ. բայց ի՞նչ հալածանք, ի՞նչ արհամարհանք չկրեցինք, որուն հետեւութիւնն եղավ, որ ցայժմ տիրած խառնաշփոթութեան մեջ առաջ կեցրանք. հետեւելով ոչ թե մեր համոզման, այլ ընդհանուր արեւմտեան սովորութեան: Եվ այս համոզմամբ սկսած ենք սակայն կամաց կամաց վերստին սկսել մեսրոպեան տառադարձութեան հետեիլ. բայց այսպիսի հեղափոխութիւն մի կարելի է առաջ բերել առանց արեւմտեան գրող և ընթերցողներն խրատուցանելու, որոնց ըմբռնմանն շատ վեր է այս խնդիրը:

Իսկ իմ անձնական համոզումս է «միօրինակութիւն գրելու մեջ» ամեն նկատմամբ: Բայց ի՞նչ ընենք Պոլսո տաճկախոս հայերն. ինչպես գրենք այս մեկ երկու տող տաճկերեն *Elinden gheldighe kdar gäht idegeim* արեւմտեան սովորական կերպով՝ «էլիմտեն կելտիյի դտար ճախդ իտեճեյիմ» թե արեւելեան զավառականով՝ «էլեմդեն գելդիյի կդար ջախտ իդեջեյիմ», եթե, ինչպես հավանական է արեւելեան տառադարձութեամբ, պիտի կարենանք համոզել բովանդակ արեւմտեան հայերն, որոնք հայտառ տաճկերեն գրեցիրու հեղեղ մ'ունին, մեր օրինակին հետեւելու, երբ որ, մանավանդ, ինչպես վերը տեսանք, պարսկերեն բառերու մեջ արեւմտեան տառադարձութիւն կնշմարինք: Կարծեմեն շատ մեծ է դժվարութիւնն, որուն թերեւս մի միակ ճամբան է տաճկերենի և պարսկերենի մեջ հետեիլ արեւմտեան տառադարձութեան:

Շատ երկարեցավ նամակս, բայց կարծեմ ձանձրութիւն չեմ տար.— Պրոֆ. Հյուբշմանին նկատմամբ գրածներս առեր եք իբրև շնայլլալ—գովաբանութիւն մը, բայց ոչ այնպես: Ես ճշմարիտ, չզարմացա, վասնզի գիտեի և գիտեմ թե ռուսահայք չունին Հյուբշմանին վրա մեծ համարում. վասնզի ավելի ժանոթ և ընդունեցած են Յ. Մյուլլերի⁷ կարծեց հետ, մանավանդ պրոֆ. Պատկանյանի⁸ ուսեանն թարգմանած լեզվագիտական հոգովածներուն համար, որոնք սակայն արամաշափապես հակառակ են Հյուբշմանի և նորագույն քերականներու (Grammatiker) կարծեց: Նույնիսկ մենք՝ հայքս, չենք կրնար Մյուլլերի կարծիքներն ընդունիլ, թե՛ լեզվի նկատմամբ, թե՛ հայերեն գրելու նկատմամբ և այլն և այլն, զորոնք ռուսահայք կընդունին:

Անշուշտ ծանոթ է Ձեզ 1883-ին Հյուբշմանի Armenische Studien, որով Լադարդի⁹ և Մյուլլերի կարծիքն (թե հայերենն իրանյան է) խախտեց: Ի սկզբան անդ (1878—9) դեմ կգրեր Մյուլլեր Linguistischer-ի մեջ (մեկու մեջ ըսածն՝ երկրորդին մեջ ժխտելով, տե՛ս ց գրի վրա գրածն), բայց ի վերջո փոխեց միտքն, ըսելով Hübschmann hat recht! և զայս իմացանք պրոֆ. Հանուշեն¹⁰, որ ջերմ պաշտպանն էր Հյուբշմանի:

Հայս կընդունի Բրուզման¹¹ յուր նոր Քերականության մեջ, որում կըսե
նայերենը ցայժմ լավ քննված չէր, հազիվ Հյուբշմանին ձեռք քննեցավ և այլն:

Հյուբշմանին ըսածն թե ի ժամանակին գրականական լեզվի մի պետք է
կարել, խորհրդածել կու տա Ձեզի, թե Հյուբշման չի գիտեր, որ մենք (արե-
վելյանք) գրավոր լեզու մ'ունինք. սակայն այս չէ Հյուբշմանին կարծիքն. այլ
կըսե գիտնականք (արևմտյան և արևելյան) իրարու հետ միաբանելով պիտի
կարեն (այսինքն այժմյան Ձ գրավոր լեզուներեն պիտի ձուլին) նոր գրավոր
սր և այլն և այլն: Կըսեք թե մենք լեզու մը ունինք այժմ. կպատասխանեմ.
Ձ հատ ունինք, որոնք արգելք են լեզվի գրավոր միօրինակյալ ընթացքին.
ավելի կնպաստին արդի գրականության, եթե երկուքն ձուլվի միակ լեզու մը,
որուն, ըստ իս, սկիզբ կըլլա եթե արևմտյան բարբառն առնու որոշ մեսրոպ-
յան տառադարձություն մը և թողու տաճկերեն ու գաղղիերեն հավելված
օտարություններն, իսկ արևելյանն թողու յուր սլավական տարրը և մերձենա
սակավիկ մի գրաբարի սահմաններն, որով միայն կարելի է միաբանել: Պատ-
րաստ եմ այսմ Ձեր կարծիքն իմանալու: Ներում խնդրելով Ձեր պատվական
ժամանակն այսչափ գրավելուս համար, կկնքեմ նամակս:

Խ. հարգանք

Հ. Գաբրիել Մենկիշյան

Կրոնավոր Մխիթարյան

№ 4

Գաբրիել Մենկիշյանը Գրիգոր Խալաթյանին

18[88] թ., հոկտեմբերի 11.
Վիեննա

Ազնվամեծար Տեր և հարգո բարեկամ.

Շատ երկարեցավ արդարև Ձեր 23/8 թվագրյալ նամակին պատասխանն:
Բայց գեղազնացության ելած ըլլալով՝ ստիպվեցա այսչափ ուշացնել. կարծեմ
դյուրավ ներողամիտ կըլլաք:

Շնորհակալ եմ Ձեր տված գոհացուցիչ տեղեկությանց համար: Ստուգիվ
շատ զարմացած էի պ. էմինին տեսությանց և գործնականին մեջ եղած մեծ
տարբերությանց վրա. վասնզի «Վեպը Հ. Հայաստանի» ծանոթ հոդվածիկն
և Բյուզանդաց թարգմանության մեջ գործածված հարմարադրության* իրարու
ճիշտ հակապատկեր են... Բայց Ձեր տված տեղեկությամբ (որ սակայն կխոս-
տովանիմ շատ հավանական շերեք), այս հակապատկերն կվերանա:

Գալով արևմտեից հարմարադրության միօրինակության, որ անվերջա-
նալի խնդիր մը դարձավ, որչափ սկզբամբ կպաշտպանինք և կխնդրինք որ
իրագործվի, բայց դարձյալ անվարելի կերևա. վասնզի ժամանակն անցավ՝
եթե արևմտյաց հայոց մեջ այնչափ տարածություն առած չըլլար, մանավանդ

* Տառադարձության բառին նկատմամբ՝ լիովի համամիտ եմ Ձեր կարծյաց. վասնզի այդ
բառը կարծեմ բնավ չի բացատրեր transcription բառին ճիշտ իմաստը, այլ ավելի
Lautverschiebung, որուն առ կարոտության յուրաքանչյուր ոք ըստ յուր ըմբռնման ձայնա-
փոխություն-ձայնաշրջություն, փոխակերպություն ձայնի, տառանջատում անուններն կու տա:
Փոխանակ փոխադրություն կընտրեմ հարմարադրություն:

տանկաբարբառ կա գրոց ու լրագրաց, հաճախությունն (որոնց նկատմամբ տեսությունս անպատասխանի եք թողած) այսչափ բազմաթիվ չլլար, կառելի էր թե այժմեան իսկ միօրինակություն հաստատվեր. բայց իրը կմնա դարձյալ ապագային. վասն զի քանի ըստ Ձեր տեսության դժվարին կթվի միացնել իրարու առայժմ երկու գրական բարբառներն. և քանի որ յուրաքանչյուրն ազատ շրջան ունի կատարելագործության դիմելու, քանի որ տարբեր են հոլովմունք և ինդեքսություն և մանավանդ շաբաղասութուն, հարկն ստիպած է և միշտ կստիպե, որ ընդունինք նաև շորորոդ տարբերություն մը—հարմարագրություն:

— Պիտի զարմանաք անշուշտ թե ինչպե՞ս երկու ընդդիմակաց կողմերն ալ կշոշափեմ. բայց զատ է գիտական տեսություն և զատ է—առօրյա գրավորական պիտույք:

Կգրեք ձեռնպես հաշտեցնելու է (երկու բարբառներու) այս տարբեր ձգտածները. ահա մի խնդիր, որ լուրջ խորհրդածության արժանի է: Շատ ձշմարիտ: Բայց, ներեցեք, արդյոք իրոք արևելյան գրավոր լեզուն պաշտպա՞ն է ռամիկ հայերենի, կամ այսպես ըսենք ռամիկին բերնե՞ն կառնու յուր սնունդը...

Ձեր և միանգամայն ի մասնավորի հայերենով զբաղող ռուսահայոց բերնեն, բայց մանավանդ, ինչպես մեր պ. ծեր վարդապետներն կըսեն, ասկե 20—30 տարի առաջ ռուսահայոց բերնեն կլսվեր պատկառելի ռամկորեն մը, որ միայն սգիտաց արհամարհելի է, բայց ինչ ընինք, որ արդի գրականության տածիլ առօրյա մատենագրաց (Tagschriftsteller)—լրագրաց և մանավանդ «Մշակի» մեջ կկարդանք ոչ թե հայ ռամկական մը, այլ հայազգեստ և ավելի ճիշտ՝ կա—ծպտյալ եվրոպական լեզու, ռուսերեն մը կամ նաև գերմաներեն մը. և այն ոչ թե ըստ պատահման, այլ սկզբամամբ ու դիտմամբ. ինչպես իրապես կտեսնվի «Արձագանքի» և «Մշակի» բանականներ: Միայն չկարծվի, որ «Արձագանքի» կույր կողմնակից և «Մշակի» (հակառակ յուր այս վերջի օրերուն յուր գիտության չափն հայտնող պարսավադիր հոգևածին) թշնամի ըլլամ. քով լիցի, վասն զի ըստ մասին «Մշակն» ալ իրավունք ունի. մենք մեր ներկա գրավոր լեզուն պիտի զարգացնենք, գեղեցկացնենք, օրինակ առնելով եվրոպական մշակյալ լեզուներե. բայց առանց եվրոպացոց գեղի ընելու մեր ճայական ոգին: «Մշակն» գեղեցիկ առաջնորդ մ'ունի առջևը, զԴավիթ Անհաղթ. բայց ոչ զՄեսրոպ և զՍահակ. երեքն ալ զարգացուցին հայ գրականությունն թարգմանելով և շարադրելով. բայց երկուքն՝ հունացէ առածն մարսելով, այսպես ըսինք և դարձնելով in succum et sanguinem, իսկ Անհաղթն արհամարհելով յուր գրականության հայ ոգին ջանաց կաղապարել զայն հունական կաղապարին վրա... Գիտեմ, ազնիվ բարեկամ, Ձեզի ավելորդ են ասոնք, բայց «խորհրդածության արժանի է» գրած եք: Եթե Ձեր ըսած ռամկաբանության զարգացուցիչ ըլլան արևելյան արդի գրողը, շատ դյուրավ երկու գավառաբարբառ իրարու կրնան մերձենալ. թե ինչպես ուրիշ առթիվ:

Գործոց շատությունն կստիպե զիս, որ աստ դադրեցնեմ գրիչս. և Ձեր պատվական պատասխանին ակնկալյալ՝ կծանուցանեմ թե եմ միշտ՝

Ձեր

ԽԾ. և բարեկամ, Հ. Գաբր. Մենկիշյանց, Կոնստանդնուպոլիս:

№ 5

Մինաս Չերազը Գրիգոր Խալաթյանին

[1889 թ.],

Հոնգոն

Ազնիվ և սիրելի բարեկամ.

Լրագիրներեն լսեցիք անշուշտ, թե թուրք կառավարութենեն հալածված, ստիպվեցա ապաստանել Անգլիա: Չուզելով մնալ անգործ, որոշեցի հրատարակել մի ամսաթերթ¹, քաղաքական և գրական, ֆրանսերեն և անգլերեն, նպատակ ունենալով աջակցել ի նպաստ հայ դատին կատարվող աշխատությանց և Եվրոպայի ծանոթացնել Հայաստանն, հայ պատմությունն, կրոնն, լեզուն, գրականությունն, արհեստներն ու արվեստներն, մի բառով հայ քաղաքակրթությունն: Ներփակ օրինակին հետ կհղեմ Ձեր հասցեին 10 օրինակ ևս, խնդրելով հաճիք նվիրել գանոնք Ձեր բարեկամներուն կամ քաղաքագետներուն և ներել մի անգամ ընդմիջտ Ձեզ տրված այս ներուժյան համար:

Ձեր հատուկ ուշադրության կհանձնեմ երկրորդ թիվն սկսյալ L'Orient inedit վերնագրով հրատարակելի հոդվածներս, որք պիտի պարունակեն արևելյան և մանավանդ հայկական ավանդություններ և հեֆիաթներ, բոլորն ալ անտիպ, գորս առիթ ունեցած եմ հավաքել մեր ժողովրդային դասերի, որպես հայտնեցի Ձեզ ի Կոստանտնուպոլիս:

Մեծ պատիվ պիտի լինի թերթիս համար հրատարակել մերթ ընդ մերթ Ձեր հմտաշար գրվածներ, որպեսզի ցույց տանք Եվրոպայի, թե հայն ալ ունի նշանավոր բանասերներ և պատմաբաններ:

Հարկ կհամարիմ տեղեկագրել, թե ամսաթերթիս ոգին ուղղված է Տաճկաստանի դեմ և ոչ բնավ Ռուսաստանի:

Ո՞ր գիտուններուն կամ գիտական ընկերություններուն խորհուրդ կուտաք որ ղրկեմ այս հայկական ուսումնասիրություններն:

Կրնա՞ք հաղորդել ինձ Ձեր համառոտ կենսագրությունն, մանավանդ ֆրանսերեն գրված, որ նաև պարունակե Ձեր երկասիրությանց վերլուծությունն: Պատրաստ եմ հրատարակել զայն ոչ թե վաղեմի բարեկամության համար, այլ զի կցանկամ աշխարհի առջև պանծացունել մեր այն ուսումնականներ, որք արդի գիտության լուսովն տոգորված են:

Մեր տեսակցություն շատ վիպական եղավ ի Կոստանտնուպոլիս: Բռնապետական երկրի մեջ հայրենասերն հանկարծական որոշումներ տալու կհարկադրվի...

Մաղթելով Ձեզ առողջ և զվարթ և փառավոր կյանք, ի մնամ միշտ

Ձեզ անձնվեր, Մինաս

Հ. Գ. Կցանկամ ունենալ նաև Պ. էմինի մանրամասն կենսագրությունն, մանավանդ ֆրանսերեն գրված հրատարակություն:

№ 6

Դրիգոր Խալաթյանը [. (?)—ին]

[1892 թ.], Նոյեմբերի 11,
[Մոսկվա]

Ձեր պատվական նամակը և նորանից մի երկու օր հետո «Հայ-ակկադ-
լան» բառգիրքը¹ ստացա շնորհակալությամբ: Պատրաստ եմ ամենայն հա-
ճությամբ իմ կարծիքս հայտնել Ձեզ այդ բառգրքի առթիվ, որ մի նորություն է
գիտական աշխարհում, բայց ճշմարիտն ասած՝ դժվարանում եմ այդ անելու
ինքս ակկադյան լեզու ուսումնասիրած չեմ, որպես և նորա վերաբերյալ դրա-
կանության ծանոթ եմ շատ սակավ, ուստի իմ հայտնածս կլինի մասնավոր՝
բուն ակկադյան լեզվին չվերաբերող մի ընդհանրապես համեմատական լեզ-
վագիտության դիտումն, թեև հիմնված է մասնավորապես հայերեն լեզվի
հնչական և ստուգաբանության օրենքների վերա—այն չափով, որ չափ դոքա
երևում են Ձեր համեմատությունների մեջ: Կրկնում եմ, որ իմ ասելիքս կլի-
նեն լուկ ենթադրությունների ավելի «Հայ-ակկադյան» բառգրքի առթիվ, քան
հատկապես նորա մասին, որո համար դիմելու է ակկադյան լեզվի մասնա-
գետներին: Նախապես պետք է նկատողություն անել լեզվագիտության մեջ
ճանաչված այն հիմնավոր կանոնը, թե ազգակից կամ ցեղակից լեզուների
նույնարմատ և հոմանիշ բառերը արտաքուստ իրար նման չեն լինում և հա-
ճախ նաև շատ տարբեր իրարից և ընդհակառակը՝ որևէ լեզվից փոխառնված
բառերը ավելի ճիշտ և որոշ են, պահպանում են իրենց իսկական տիպարը՝
կներեք օրինակներ առաջ բերել, հայր և *pater*, *l-paier*, մայր *mater*, եղ-
բայր *bruter*, դուստր և *s. dukitar*, *g. Tochter*...

Սոքա ազգակից լեզուների հոմանիշ և նույնարմատ բառեր են՝ ամեն
ազգ իր հատուկ ձևը, իր լեզվի կանոնների համաձայն յուրացնելով, միևնույն
ժամանակ այս օրինակներից մենք ընդհանուր լեզվական օրենք (1 անընթ.)
կարող ենք եզրակացնել, թե հայերենում հաճախ ճ համապատասխան ադ-
գակից՝ անտիպ էտապ, լեզուների *P, j=t U=սանս. հ. գերմ. հ, S=j, l*
սկզբում կորցնում է *p* (լի փոխ. պլի) և այլն: Ընդհակառակը, փոխառնված
բառերից՝ մենք օրենք չենք կարող եզրակացնել, որովհետև նոքա նույնու-
թյամբ պահպանում են իրենց սկզբնական կերպարանքը, հիմնականը: Հիմ-
նական *luma* մնում է լումա, սեմ. *sem u. gatu*—կատու, *s. honzara*—խնձոր,
արաբ. *zat*—ձեթ, պրսկ. *թապ-տապ*, պահլ. *վիհ, հ. պ. բեհ—վիհ, պ. խահ*
(կերակուր)—խահ, պ. զոռ և զուր (ույժ)—զոր ճակատ—հ. պ. շագատ (բլուր,
բարձրություն):

Արդ հայերենը որպիսի հարաբերություն ունի դեպի ակկադյանը ազ-
գակցական, թե միայն փոխառնական՝ եթե ազգակցական, ապա ուրեմն՝ այդ
ազգակցությունը ոչ միայն հայերենի հետ պետք է լինի, այլև բոլոր անտիկ
եվրոպ. լեզուների հետ, որոնց ճյուղին անտարակույս պատկանում է հայե-
րենը, ուրեմն հայ և ակկադյան համեմատությունների մեջ պիտի տեղի ունե-
նա նաև մյուս հնդիկ-եվրոպ. սանսկրիտ. պարս. հույն և եթե ընդունենք հա-
յերի և ակկադյանի ազգակցությունը, պետք է, որ դա ապացուցվեր Ձեյ
արած համեմատությունների հնչական երևույթներով, մինչդեռ նոցա մեջ

դժվար է ըմբռնել որևէ միօրինակության համար կանոն, օրինակ ակկ. i 4 բա-
ռի մեջ շորս տարբեր հոմանիշ ունի հայերենում,— և ոչ միայն ձայնավոր,
այլև բաղաձայն, որ փոքր ինչ (1 անընթ.) համապատասխանելով. կամ Մ-ի
կամ ա-ի կամ է-ի կամ հ-ի (a-matige—ակն, sz—կիզ) (ուլ) sr—հառաջ),
նույնը պետք է նկատել և մյուս ճնշումների մասին, ակկ. k համապատաս-
խանում է բևի, հի, բի, դի (ka—կապել, kal—քաղաք, kinge—հինգ, kn—խահ,
lu դու) և կամ ակկ. յ—համապատասխանում է ժի, ճի, ձի (dn—թղթ. du-
raa—ճարակ), Միկենույն ժամանակ պետք է ասել, որ Ձեր բերած համեմա-
տությունների մեջ բազմաթիվ բառեր կան ոչ բուն ճայերեն, այլ միայն
փոխառնված իրանական և հիմնական լեզուներից, որոնց վերա դժվար է որևէ
կանոն կամ օրենք հիմնել. օր. զուտ իրանական և դեռ IV—V դարուց առաջ
մտած հայոց լեզվում:

7. վեհ (պահլ.—պրսկ. բեհ)
8. տապ—պրսկ.
4. ճակատ—պրսկ. շաղադ—բլուր, բարձրություն
5. ճարակ—պրսկ. զարիդան՝
սև—պրսկ.
1. զօրեղ—
ծրազ—պրս. րազ
3. հոհ—պրսկ.
2. զոր—պրսկ. զոր, ույծ
6. սև—պրսկ.
սեմական են՝
ծրար
կաբաւ
շերտ
շաւիղ
քաղաք և այլն:

Հայոց ակն համեմատենք ակկ. Sge-ի հետ, բեւ burn-ի, դուռն—tu-ի,
կապ—Ra-ի, հինդ—Ringes, դու—ku-ի, գիշեր—opi-ի, լվանալ—cag-ի, երբոր
ավելի առանց դժվարության և ամենայն ակներևության հաստատուն կերպով
դոքա համեմատվում և ստուգվում են՝ lat.—ocu lus, սլավ. օկօ. (lenu հայերեն
աչք.—слав.—օչի, capere (1 անընթ.), tu, Du(Ger), Vocspet, սլավ.—վե-
շեր (1 անընթ.):

Եթե ենթադրենք, որ հայերենի հարաբերությունը դեպի ակկադյանը
փոխառնական է, այն ժամանակ խնդիրը բոլորովին փոխվում է, այլևս հարկ
չկա դիմել այդ երկու ազգերի հնագույն ցեղակցության և նոցա լեզուների
ազգակցության: Հայերենում, ինչպես հայտնի է, շատ բազմաթիվ են փոխա-
ռած խոսքեր ամեն մի լեզվից:— Իրանական լեզվից (հին պրս. պահլավ, նոր
պարս.), հիմնականից (Ասորեստան, Ասորիք, արաբ., հրեական), հունակա-
նից (փոքրասիական երկրներից, Կապադովկիայից), գուցե նաև վրաց լեզվից,
սոցա վրա կարելի է ավելացնել և ակկադերեն փոխառնությունները, բայց թե
երբ և ինչպես են դոքա մուտք գործել հայերի մեջ, արժեք, հայտնի բան է,
պարզել և ապացուցել:

Ուրարտացոց լեզվի մասին անդեպ եմ համարում երկարաբանել, որովհետև նորա հայերենի հետ բնավ կապ չունենալը գոնե այժմ ակնհեր է: Ահա այն տպավորությունը, որ գործեց ինձ վերա Ձեր բառագրքի հարևանցիորեն աչքի անցկացնելը, որի մասին կամեցա Ձեր խնդրանաց, պարտ համարեցի մի քանի տողով հաղորդել Ձեզ:

Իհարկե, խնդիրը դեռ մութ, դեռ սակավ ուսումնասիրված լինելով, դժվար է վճռական կերպով պնդել: Գուցե մի օր հաստատվին սրանք Ձեր ենթադրություններից, որոնց մեջ արդարև բավական նորությունը և իհարկե մեծ հմտություն կա մայրենի լեզվի և նորա բարբառների:

Ողջունելով Ձեզ և Ձեր ընտանյաց, որին պատիվ ունեցած եմ ժանոթ լինել և հյուրասիրությունը վայելել, խնդրեմ, մեծապատիվ տեր, ընդունել իմ խորին հարգանացս հավաստիքը:

[Գր. Խալաթյան]

ՄԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

№ 1

1 Վիկտոր Լանգուա (1829—1869)—ֆրանսիացի արևելագետ, հայագետ, Ճապարհորդել է Կիլիկիայում և Հայաստանում: Նա գրառվել է հատկապես Կիլիկիայի հայկական թագավորության պատմության ու կուլտուրայով և հայ-ֆրանսիական կապերով:

2 «Всеобщая история Степаноса Таронского, Асохика по прозванию» (с примечаниями), перевод Н. О. Эмин, М., 1864.

3 «Հնախօսությունք ի վերա հայկական հիթանոսությանց», թարգմ. ի գաղղ. բնագրի շոգ. Պրուսացի Տերոյենց, Արմաշ, 1875:

4 «Всеобщая история Вардана Великого», перевод Н. О. Эмин, М., 1861.

5 «История Армении Моисея Хоренского», перевод с арм. и объясн. Н. Эмин, М., 1858.

6 Նկատի ունի շոգհանես Երզնկացուն (Պլուզին) (մոտ. 1230—1293)—տաղերգու, փիլիսոփա, տիեզերագետ, հասարակական գործիչ:

7 «Ղազարոյ Փարպեցւոյ արարեալ պատմագրութիւն», Վենետիկ, 1793:

8 Մ<սեբ> Մ<սերեանց>, Թուղթ ներսեսի արքեպիսկոպոսի Կիլիկեցւոյ Տարսունի («Եռագաղ», Մոսկվա, 1859, № 1, էջ 3—11, № 2, էջ 38—45):

9 «Առակք Ողոմպիանու», Վենետիկ, 1854 (գիրքը մի կազմի մեջ է «Առակք Մխիթարա Գոշի» (1854) գրքի հետ միասին, որը նույնպես Վենետիկի հրատարակություն է):

10 Հմմտ. «Բանբեր Մատենադարանի», № 8, 1967, էջ 176 (Փ. Անթարյան, «Վարդան Արեւելցու «Ժղլանքը»): Տե՛ս նաև՝ Մատենադարան, ձեռ. № 750, Բ. 115բ: Հրապարակվող հատվածը վերցված է «Ժղլանք»-ի մի այլ ձեռագրից:

№ 2

1 Ալեքսանդր Մխիթարյան, Տաղեր ու խաղեր, հարուստ ժողովածու, Ալեքպոլ, 1900:

2 Ալեքսանդր Մխիթարյան, Փշրանքներ Շիրակա ամբարներից, Մոսկվա—Ալեքսանդրապոլ (Ռէմիյան ազգագրական ժողովածու, հ. Ա, Թիֆլիս, 1901):

3 Նկատի ունի Գ. Խալաթյանի «Ղազար Փարպեցի և գործք նորին» (Մոսկվա, 1883) երկասիրությունը:

№ 3

1 Գրիգորիս Վ. Գալեմբարյան (1864—1936)—հայագետ, Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ: Գրել է հայագիտական հոդվածներ և մենագրություններ: Նրա կարևոր գոր-

երից է «Պատմություն հայոց լրագրության» (Վիեննա, 1893) աշխատությունը: Խմբագրել է «Հանդես ամսօրյա» պարբերականը:

2 Վիլյամ Հուֆթենս (1827—1894)—ամերիկացի արևելագետ-լեզվաբան:

3 Բերթոլդ Դելբրյուկ (1842—1922)—գերմանացի լեզվաբան, Ենայի համալսարանի պրոֆեսոր, Գրել է մի շարք գրքեր՝ համեմատական քերականության շուրջը:

4 Հենրիխ Հյուրշման (1848—1908)—գերմանացի արևելագետ, հայագետ, լեզվաբան, Ետրասբուրգի համալսարանի պրոֆեսոր: Ունի մի շարք մենագրություններ՝ նվիրված պարսկերենի, հայերենի և արաբերենի ուսումնասիրությանը:

5 Faustos de Byzance, traduction par N. O. Emine, Paris, 1867.

6 Նկատի ունի «Հանդես ամսօրյա»-ն:

7 Յերգերիկ Մյուլլեր (1834—1898)—գերմանացի արևելագետ-հայագետ-լեզվաբան, Վիեննայի համալսարանի պրոֆեսոր, գերմանական ակադեմիայի անդամ:

8 Քերոլդ Գատկանյան (1833—1889)—նշանավոր հայագետ-արևելագետ, ռուսական կայսերական ակադեմիայի թղթակից անդամ:

9 Պոլ Անտուան Լազարո (1827—1891)—խոշոր արևելագետ-հայագետ: Գյոտինգենի համալսարանի պրոֆեսոր: Ունի մի քանի տասնյակ մենագրություններ՝ նվիրված Արևելքի ժողովուրդների պատմության, լեզվի, կուլտուրայի և կրոնի հարցերին:

10 Յոհան Հանուշ (—1887)—հայագետ, Վիեննայի համալսարանի պրոֆեսոր, զբաղվել է այլ բարբառների, հատկապես լեհահայերի բարբառի ուսումնասիրությամբ:

11 Նկատի ունի գերմանացի լեզվաբան-հնդեվրոպագետ, կայսերի համալսարանի պրոֆեսոր Կարլ Բրուգմանի (1849—1919) «Հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության ուրվագիծ» (հ. 1—2, 1886—1893) աշխատությունը:

№ 5

1 «L'Arménie» («Հայաստան»)—քաղաքական և զրական լրագիր, խմբագիր՝ Մինաս Չերազ, Լոնդոն, 1839—1898, Փարիզ, 1898—1906:

№ 6

1 Այս բառգրքի հեղինակի, որը միաժամանակ Գ. Խալաթյանի նամակի հասցեատերն է, հնքությունը պարզել չկարողացանք: